Կրկնակի փորձաքննության դիմումի և անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման եղանակը

Կրկնակի փորձաքննություն նշանակելու համար դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը կարող եք ներկայացնել հետևյալ եղանակներից որևէ մեկով.

- դրանք ուղարկելով Բյուրոյի info@paap.am էլ. փոստի հասցեին,
- դրանք ներկայացնելով Բյուրոյին անդամակցող ապահովագրական ընկերությունների՝ ՀՀ-ում բացված ցանկացած գրասենյակներ: Ընդ որում՝ Բյուրոյին անդամակցող ապահովագրական ընկերությունների անվանումները և դրանց կայքերի հասցեները հրապարակված են Բյուրոյի կայքի առաջին էջում, իսկ ապահովագրական ընկերությունների գրասենյակների հասցեները հրապարակված են ապահովագրական ընկերությունների ինտերնետային կայքերում:

Տեղեկացնում ենք նաև, որ «ԱՊՊԱ ընդհանուր պայմաններ» RL 1-001 կանոնների համաձայն՝ պատշաճ էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկված դիմումները համարվում են ստորագրված համապատասխան Ապահովադրի, Ապահովագրված անձի կամ տուժողի կողմից: